ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ռեգուլյար բենզինի ձեռքբերման նպատակով կազմակերպված № ԶԿՀ-ԳՀԱՊՁԲ-23/01 ծածկագրով գնանշման հարցմամբ կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի ապրիլի 03-ին կնքված № ԶԿՀ-ԳՀԱՊՁԲ-23/01 պայմանագրում 2023 թվականի հունիսի 23-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ եռակողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝	վաճառողի կողմից ներկայացված 2023 թվականի հունիսի 19-ի № 042 գրությունը
Փոփոխության նկարագրություն՝	պայմանագրի մատակարարման ժամնետի երկարաձգում
Փոփոխության հիմնավորում՝	Պայմանագրի 8.5 և 8.6 կետեր

Ծրագիր իրականացնող՝ *«Զանգեզուր» կենսոլորտային համալիր ՊՈԱԿ*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №1

« 03 » ապրիլ 2023թ. N ԶԿՀ-ԳՀԱՊՁԲ-23/01 պայմանագրի

ք.Երևան «23» «06» 2023թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Գ.Գույլանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Ծրագիր համակարգող»), և «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ա.Մկրտչյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Ծրագիր իրականացնող» կամ «Գնորդ»), մի կողմից, և «Մաքս Օիլ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ.Մելքոնյանի, որը գործում ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Վաճառող»), մյուս կողմից, երեքը միասին՝ այսուհետ՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով կողմերի միջև 2023 թվականի ապրիլի 03-ին կնքված «ԶԿՀ-ԳՀԱՊՁԲ-23/01» ծածկագրով պայմանագրի 8.5 և 8.6 կետերը, ինչպես նաև «Մաքս Օիլ» ՍՊԸ-ի կողմից 2023 թվականի հունիսի 19-ի № 042 գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2023 թվականի ապրիլի 03-ին կնքված «ԶԿՀ-ԳՀԱՊՁԲ-23/01» ծածկագրով պայմանագրի ապրանքի մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով:

2. Այլ պայմաններ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2. Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երեք օրինակից, հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի Հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԾՐԱԳԻՐ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ	ԾՐԱԳԻՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ	ՎԱՃԱՌՈՂ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ**	**«Մաքս Օիլ» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	Սյունիքի մարզ, ք.Կապան, Մ.Ստեփանյան 42/27	ք.Երևան Տպագրիչների 8
	ՖՆ գործառնական վարչության	«Ամերիաբանկ» ՓԲԸ
	ՀՀ 900018003286	ՀՀ 1570026452480100
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 09423966	ՀՎՀՀ 02662703
Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար	«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն	«Մաքս Օիլ» ՍՊԸ-ի տնօրեն
Գ.Գույլան	***Ա.Մկրտչյան***	***Կ.Մելքոնյան***
(ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	**Կ.Տ.**	**Կ.Տ.**